ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ

Եղանակ

6

(189)
Հունիս, 2022



«Համահայկական գրողների միությունը» հրատարակել է Ղևոնդի (Համլետ Մանուկյանի) «Հեռացող մարգարեն» բանաստեղծական ժողովածուն, որը անվանի գրողի հատընտիրն է: Գրքում տեղ են գտել նրա նախորդ՝ «Եկա» /1997թ./ և «Ձրերի ցնծության ժամանակ» /2011/ ժողովածուների լավագույն ստեղծագործությունները:

Ղևոնդի բանաստեղծական աշխարհը կարող ենք համարել մեր ժամանակին ուղղված խորաթափանց հայացք և ոգեզննություն: Նա գրականություն մտավ իբրև մեծ հավատավոր, սակայն հենց իրեն էր վիճակված տառապել՝ տեսնելով նահանջը հայ ոգու: Նա ճանաչեց մեր ժամանակը և մեզ, իր հոգու աչքերով տեսավ սպասվող աղետը, տեսավ մեզնից օտարվող հրեշտակին, մեր հավատքի մարող մոմերը, և ինքն էլ վառվեց ու մարեց այդ տառապանքից: Նա ծնվել էր հավատքի շեփորահայրը լինելու համար, բայց տեսավ կորստյան դարն ու մեզնից հեռացող մարգարեին:

Ղևոնդի պոետական աճը կազմավորվեց հայ գրականության դասական ավանդույթների հենքի վրա և հատկապես հյուսվեց Նարեկացու տիեզերական մրմունջներից:

Գիրքը հրատարակվել է Համահայկական գրողների միության Ոսկե մեդալակիր Վահէ Թոլլեանի հովանավորությամբ:

ՀԵՌԱՑՈՂ ՄԱՐԳԱՐԵՆ

Ղևոնդ

***

Պատուհանիս աչքի մեջ - թե կա
երկինք - ուր չկամ-
երազանքդ հավաքիր- ոտքս
շեմից դնեմ դուրս,
թող ինձանից այս գիշեր,
մի գիշեր էլ հեռանամ,
որ հատվելով բարձրանամ
մի ճյուղի չափ ու մի շունչ:

Ես՝ բաժինս տանող ջուր, և
արյունս - առուներ,
կոհակներս - ինձ համար աղոթքի
բառ չունեցան,
ես չունեցա լույսը - քեզ
մոտեցնող թռչուններ-
ծառզարդարս, մի ծառից,
գլուխը կախ հեռացավ:

Ու տես՝ քամուն տրվելիք
ալիքներով փայփայված-
իմ տխրության հանգույցում
ինձ պահած եմ հեռանում,
գիտեմ-իբրև սփոփանք- ինձ
կբերի ձիուց ցած
իմ չխմած ջրերի ծարավների
հանձնառուն:

Ու սփոփանքը - հոգնած -
մի թիթեռ է ծոծրակիս-
ինձ չի դնի մի գիշեր ջրի բերած
ծաղկի տեղ,
թե հայտնվի մարգարեն ու ինձ
պահ տա կրակին-
փոքրավորիս կունենաս - թևերդ
բաց - ցած չընկնեմ:

Մշուշներից եմ գալու - ջուրն
անուրջներ թե տանի-
իրիկունի երկնքին բացատրված
մերձենամ-
աստղ զարթնի ու գնա քո
պատկերի հետևից-
իմ տխրության պատերի
ժայռապատկերն համբուրած:

Ու աչքերիս անկյունում ինձ
ստվերը թե պոկի-
լույսը կգա - ինձ համար - վառվող
գույները պահած,
և լուսինը այս գիշեր մեջքի վրա
կպառկի-
հասկը լցված կկենա,
ու թագավորը՝ ապրած:

***

Աշխարհը տունս է եկել անակն-
կալ հյուրի պես-
ես հույսերից շփոթված
երազներս եմ տրորում-
ինձ գտել են, կգտնեն, պիտի
գտնեն անպատճառ-
աշխարհը տունս է եկել…
ու անունս չի հիշում:

Հյուրասիրեմ իմ տան մեջ իմ
աշխարհին՝ իմ գինով-
ամեն կաթիլ՝ մի համբույր, ամեն
համբույր՝ մի հայրեն,
ուր գիշերվա սեղանի հացն ու
գինին են գինով,
ու աշխարհում դեռ բույր կա, որ
ես պիտի հոտոտեմ:

Ահա՝ գիշերը պահած
քո մատների ծայրերին,
ահա՝ մոմերը պահած քո գիշերվա
աչքերում,
քանի բոց է սիրելու քո թիթեռը
քո ծաղկին,
որպես վերջին ցնորքի հիշատա-
կած այցելու:

Հիմա ասեմ՝ խաղաղվիր, հիմա
ասեմ՝ աչքդ լույս-
իմ տերևները բոլոր փաթաթվել
են մի ծառի,
ու քո վերջին ցնորքի
մտապահած այցելու
այս կրակի կտորը
կախարդողի աչք ունի:

Այս կրակի կտորը
կախարդողի աչք ունի-
ինձ վերևից կնայի, ու իմ ձեռքից
կթռչեմ-
ամեն թռիչք՝ մի գիշեր, ամեն
գիշեր՝ մի տարի,
ամեն տարի՝ մի զատիկ, ամեն
զատիկ՝ մի հայրեն:

***

Ճոճս կապել ես ծառի երազանքի
ճյուղերից,
երազանքի ճյուղն ընկնի-ես
բարձրից եմ ուզում.
իմ ճակատին տեղ չկա-
մատդ հեռո՛ւ ձգանից,
պահիր, աչքերդ պահիր-
ինձ այսպես են համոզում:

Քանի եկել ես-
վրաս գթացողիդ աջը դիր,
գթացողիդ աջը դիր- ես ինձ
պագն եմ հասցնում.
ծոցբացեքի իրավունք տուր
իմ բացվող աչքերին,
հառիր աչքերդ վրաս -
ինձ այսպես են փախցնում:

Քո մազերին որ մնաց-
լուսատտիկն է ափիս,
լուսատտիկը ափիս
ինձանից չի հարցնում,
թե պատասխան չգտնես,
մի՛ հանձնվիր կարոտին,
վառիր, լույսերդ վառիր-
ինձ այսպես են հանգցնում:

Իմ հեքիաթիկ, թե գնաս-
ծաղիկն ահա՝ ծոցդ դիր,
ծաղիկն ահա՝ ծոցդ դիր -
ես ինձ քարն եմ վերցնում.
բաց նամակներ են գալու -
ցավը՝ վրան ձեռագիր,
այրիր, տողերս այրիր-
ինձ այսպես են վերծանում:

***

Երբ աղոթքն ավարտվի -
մոմերը նվաղեն,
ու ծառդ չհագնի կանաչը
ճյուղերի,
ու կանչդ իր բարձրի
թռչունին չտանի,
չհասնի տրոփդ արձակած
հնչյունին.
քո ցավին վստահած,
քո կարիքն հերքելով,
քեզ մտքում չպահես ու չայրես
քեզ ուշիմ,
չտանես քեզ դուռդ որոնող
մտքերով,
գրոհված հատ առ հատ - չսիրվես
մեկուսի,
ու միտքդ չարյունի մոտեցող
վագրի պես,
չբախի դռներդ քո առջև
ծածկված,
քո կանաչն ինձ հասնի ու չտա
խոտերիդ,
քո կարմիրն ինձ բռնի ու չընկնի
քարեքար-
քո ձիուն չե՞ն թամբի, քո ձիուն
կարձակեն,
որ դաշտդ վրնջա, ու խոտդ
խաղաղվի,
ու վազքդ վարանող կուտակումն
աղային
քեզ ասի, թե կուրծքդ էլ ինչով
կծաղկես-

Հաշտությամբ արարված,
պարտությա՛մբ կավային,
հնչումո՛վ հավելյալ, ծանրութ-
յա՛մբ խավարի.

Ես փշեր եմ ծաղկել - կրակով
կխաղանք,
հանդարտիդ կհոգա, ճղճիմդ
կխեղդի,
ու ծուխդ չի թողնի՝ քո դեմքը
ճանաչես,
երբ կրակդ հանգցնես, մոխիրդ
հեռանա.

Այսքան շուտ չէր կարող մշուշդ
թանձրանալ,
այսքան շուտ չէր կարող գիշերդ
մակաղել,
ապտակդ չպիտի այսքան շատ
ուշանար
ու դեմքդ չպիտի մերձենար
խաղաղին,
որ միտքդ ծանձրանար, ու հոգիդ
խանգարվեր:

Ես փշին կծաղկեմ, կրակով
կխաղամ,
էլի ինձ կծածկեն կտորով
չկարված,
էլի ինձ չմաքրած կդնեմ
բարձերին,
ու եղած-չեղածը՝ խենթացած մի
թիթեռ,
մի ծաղիկ կբռնի ու հետը կխաղա.

Ո՛վ հուշի՝ իմ բույրը քո մահն է,
իմացիր,
արթնացիր ու հիշիր՝ քեզ որտեղ
կպահեն,
երբ ելնես - չիմանաս՝ ո՛ւր գնաց
այրուձիդ,
իսկ վարգը կամենա ստվերդ
վերցնել.
ու աղոթքդ ավարտվի, մոմերդ
հանգցնեն.

Բանբերդ այսքան շատ չպիտի
ուշանար,
զորավարդ այսքան
չպիտի ճապաղեր,
այսքան շուտ չէր կարող
մարգարեն հեռանալ,
այսքան շուտ չէր կարող
հրեշտակն օտարվել:

Ես փշին կծաղկեմ, կկապեմ
ժապավեն,
կկախվեմ փեշերից- չթամբեն
քո ձիուն,
քո ձիուն արձակեն-
երբ աղոթքն ավարտվի, մոմերդ
նվաղեն:
Այսքան շուտ չի կարող տիրանալ
նիրվանան,
այսքան շուտ չի կարող
պոռթկումդ համբերել.
ես փշին կծաղկեմ, կրակով
կխաղամ,
ո՞վ ճչա՝ բարձրացիր,
ո՛վ ինչի՝ ցանկանամ,
ինձանից հեռու է՝
թե թեքված խաղաղվեմ,
ինձանից վերև՞ է,
թե՞ ձգվեմ մի հոր չափ.
Ես փշին կծաղկեմ, կրակով
կխաղամ-
վտահիր մի ճյուղով,
մի դեղին մեծանամ
ու կաթեմ մի կարմիր.
քո ձիուն չեն թամբի,
քո ձիուն կարձակեն.
Ու ծառդ կհագնի կանաչն իր
ճյուղերի
ու տրոփն հնչյունիդ կկապի
ժապավեն,
ու շաղդ կնստի քո դռան
խոտերին-
քո ձիուն չեն թամբի,
քո ձիուն կարձակեն-
այսքան սուտ չէր կարող հորինել
նիրվանան,
այսքան շատ
չպիտի պոռթկումդ հապաղեր:

ԳՐՔԱՐՎԵՍՏ ԵՎ ԿԱԼԻԳՐԱՖԻԱ -2

Լունիսի 8-11-ը Գալերի 25-ի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հերթական գրքատոնը՝ «Գրքարվեստ և կալիգրաֆիա 2» նախագիծը, Գյումրու Գալերի 25 ցուցասրահում:

Ծրագրում ցուցադրություններ ու դասախոսություններ էին, վարպետաց դասեր ու տոնավաճառ՝ նվիրված գրքարվեստին ու գեղագրությանը, որին մասնակցում էին բազմաթիվ գրողներ, արվեստագետներ ու նկարիչներ:

Նախագիծն իրականացվեց Ֆյուր Արմենիեն հիմնադրամի նախաձեռնությամբ և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ:

«Սասնա ծռեր» էպոսի միապատում ճյուղերից մեկը՝ «Տղա Դավթի և աղջիկ Խանդութի հեքիաթը», առաջին անգամ տպագրվել է 1895թ. «Արարատ» ամսագրի նոյեմբերի և դեկտեմբերի համարներում: Այն պատմել է Թադևոս առաքյալի վանքի գյուղացի Դավիթը, գրի է առել Խաչիկ Վ. Դադյանը:

Պատումը տեղ է գտել «Սասնա ծռեր» ակադեմիական հրատարակության Բ հատորում, ընդհանուր խմբագրությամբ ակադեմիկոս Մ. Աբեղյանի, Երևան,1951թ.:

2011թ. բանաստեղծուհի Ռոզա Հովհաննիսյանը հիշյալ պատումը Վանա բարբառից փոխադրել է Կարնո բարբառի Գյումրու խոսվածքի և գրչագրել է:

Գրքի հեղինակն ու նկարիչը ՀՀ վաստակավոր նկարիչ Արարատ Սարգսյանն է:

Գիրքը եռալեզու է. անգլերեն թարգմանությունը՝ Հաբեթ ու Վարդուհի Մուրադյանների, գերմաներենից թարգմանել են Վիկտորյա Վարդանյանն ու Ֆրեդերիկ Բերֆելդեն: Հրատարակվել է ՀՀ մշակույթի նախարարության հոգածությամբ 2012 թվականին:

Սոնա ԱՆՏՈՆՅԱՆ

ԳՅՈՒՄՐԵՑԻ ՆԿԱՐԻՉԸ ՀԵՔԻԱԹ Է ՊԱՏՄՈՒՄ

Գյումրու «Գալերի 25» պատկերասրահում «Գրքարվեստ եւ կալիգրաֆիա» ամենամյա նախագիծը բացվեց Հայաստանի Հանրապետության վաստակավոր նկարիչ, ծնունդով գյումրեցի Արարատ Սարգսյանի «Արխետիպեր»-ի ցուցադրությամբ:

Հեղինակը կոտրել է ավանդական ձեւն ու ինքնարտահայտվել ոչ ստանդարտ նյութերով, մեթոդներով ու թեմաներով՝ ձեռակերտ թղթի վրա դրոշմելով հին աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդների գրերը՝ ասորական, ուրարտական, եգիպտական, մայաների…

«Գրքարվեստ եւ կալիգրաֆիա» նախագծի երկրորդ հանդիպման առանցքում հեքիաթն էր: «Տղա Դավթի եւ աղջիկ Խանդութի հեքիաթ» պատումը հանդիսատեսին ներկայացվեց ձեռագիր գրքով: Ներկաները տպավորիչ հանդիպում-վարպետաց դասի մասնակցեցին գրքի հեղինակ Արարատ Սարգսյանի եւ տեքստը Գյումրու բարբառի փոխադրած, բանաստեղծուհի Ռոզա Հովհաննիսյանի հետ:

Պատումը հայերեն, գերմաներեն, անգլերեն տպագրվել է 10 տարի առաջ, բայց դրա ստեղծման պատմությունը շուրջ հինգ տասնամյակների հեռվից է գալիս:

Արարատ Սարգսյանը հիշեց մանկությունը, թե ինչպես էր տատիկը պատմում Սասունցի Դավթի պատմությունը, իսկ ինքը դիմացի մութ պատի վրա մտոք տեսնում էր դրա բեմականացված տարբերակը:

Ձայնն ու պատկերը համադրելու վերջնական որոշում նկարիչը կայացրել է տարիներ անց Ժնեւի գրքի սալոնում: «Մի վրան տեսա, մարդիկ հերթով՝ 10-10 մտնում ու կես ժամ անց դուրս էին գալիս: Մոտեցա, տեսնեմ՝ գրքի սալոնում, որտեղ տպագիր գիրք պետք է լիներ, բանավոր մշակույթ է փոխանցվում: Բեդուինը թափառիկ սյուժեներ ունեցող տեքստերով հեքիաթ է պատմում»:

Դրանից հետո նա ձեռքն է վերցնում Դավթի մասին 75 բանասացների աբեղյանական պատումներն ու ստանում մեր ճանաչած Դավթից տարբեր կերպար՝ ավելի անմիջական, սխալական ու պարզ:

Արվեստագետը տպագրության հնագույն օրինակով կավե 18 գլանակ է ստեղծել, որոնք, պտտվելով խոնավ կավի վրա, բանավոր խոսքին զուգահեռ պատկերների լեզվով հեքիաթ են պատմում: Իսկ գյումրեցի բանաստեղծուհի Ռոզա Հովհաննիսյանը մեծ վարպետությամբ Սասունցի Դավթին խոսեցրել է Գյումրու խոսվածքով:

Ստացված ոչ ստանդարտ գրքով Արարատ Սարգսյանը շրջել է ամբողջ աշխարհով՝ Ավստրիա, Գերմանիա, Շվեյցարիա, Իտալիա, Սինգապուր, Կորեա: «Ինչպես հին ժամանակներում ասացողներն էին գյուղից գյուղ գնում ու պատմում, այնպես էլ ես պտտվեցի աշխարհով ու պատմեցի մեր հեքիաթը»,- ասում է նկարիչը:

Գյումրիում Արարատ Սարգսյանի եւ Ռոզա Հովհաննիսյանի հետ «Տղա Դավթի եւ աղջիկ Խանդութի հեքիաթը» «պատմեցին» նաեւ 18 գլանակները, իսկ պատրաստի կավե նկարները որպես նվեր հանձնվեցին «Գալերի 25» պատկերասրահին:

Աննման ՄԻՆԱՍՅԱՆ

ԴՐԱԽՏԻԿԸ

Մի անտառ կար: Մի հինավուրց ու տարօրինակ անտառ, որտեղ ապրում էին և՛ վայրի գազաններ, և՛ թռչուններ (հատկապես չվող), և՛ ընտանի կենդանիներ: Այս անտառի բնակիչները շատ էին սիրում խոսել անցյալից: Այնքա՛ն էին անցյալից խոսում, որ մոռանում էին ներկան: Խոսում էին իրենց հզոր թագավորների մասին: Խոսում էին այն մասին, թե առաջներում որքա՛ն մեծ է եղել անտառի տարածքը: Եվ քանի որ անտառը դրախտավայր էր, բոլոր հարևանների և ոչ միայն հարևանների աչքերը անտառի վրա էին…

Անտառի բնակիչները միմյանց հետ հաշտ չէին, և հարևանները, օգտվելով նրանց անմիաբանությունից, անտառից մաս-մաս, բաժին-բաժին պոկում-վերցնում էին: Եվ քանի որ անտառը նրանց ճանապարհին էր և խանգարում էր, ուզում էին ամբողջն իրենցով անել:

…Ինչ-որ ժամանակ անտառը որոշել է իր բնակիչների միջից թագավորներ կարգել և պայքարել ծակաչք հարևանների ոտնձգությունների դեմ: Սկզբում ամեն ինչ ստացվել է. հարևանները խեղճացել, հեռացել են անտառի մատույցներից: Անտառը շատ հերոսներ է ունեցել և հպարտացել է նրանցով:

Բայց թշնամին չէր հաշտվել իր պարտության մտքի հետ: Սկսել է տարբեր ճանապարհներով վարկաբեկել անտառի արքաներին և հերոսներին: Տարիների ընթացքում դա նրան հաջողվել է. անտառի բնակիչները ատել են իրենց թագավորներին, անվանարկել հերոսներին և սկսել կուռքեր որոնել:

Հետո անտառում օրենքները փոխվել են. ոչխարները հաղթել են առյուծներին և իրենց միջից ընտրել առաջնորդ: Սրանց առաջնորդը մյուսներից տարբերվելու համար կեղծ մորուք է հարմարեցրել դեմքին, իբր այծ է՝ ների: Բայց և՞ մարմինն էր ոչխարի, և՞ ձայնը: Արժանապատվության մասին էլ չարժի անգամ խոսել:

Այս առաջնորդը, քանի որ շատ էր վախենում հզորներից, մերթ ընդ մերթ նրանց պահել է վանդակների մեջ: Վանդակների թիվն անտառում օրեցօր ավելացել է, բայց առաջնորդի վախը դրանից չի փոքրացել, և նա որոշել է ամբողջ անտառը ևս վանդակապատել:

Եվ մինչ նա զբաղված է եղել վանդակապատման աշխատանքներով, հարևանները շարունակել են մաս-մաս, բաժին-բաժին կտրել, տանել դրախտանտառից :

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՔԱՄԻՆԵՐ

Լինում է, չի լինում՝՝ մի անտառ: Այս անտառի կենդանիները խորհրդարան են ստեղծում, որ անտառը կառավարվի օրենքով՝ անտառի օրենքով:

Անցնում են երկար ու ձիգ տարիներ: Մի օր էլ այստեղ մեծամասնություն են կազմում շները, քանի որ նրանք, ինչպես ասում են, շնից էլ շատ են լինում:

Այս շները, որպեսզի տարբերվեն անտառի մյուս բնակիչներից, չեն սափրվում: Նրանցից յուրաքանչյուրի ձայնը բարակ է լինում, արգահատելի: Երբ ամբիոնից հոխորտում են, նրանց ձայնը կաղկանձ է հիշեցնում: Թեև այդ շները հիմնականում երիտասարդ էին՝ անփորձ էգ ու որձեր, բայց նրանց մեջ կային նաև հազար ու մի տեսակ կեղտի միջով անցած հին ու քաֆթառ շներ: Ի տարբերություն այլ շների՝ սրանց բոլորին միավորողը արժանապատվության բացակայությունն էր: Սրանք իրենց արժանապատվությունը կորցրել էին, երբ իրենց տերը / որն իրեն գամփռ էր կոչում/ բոլորին ստերջացրել էր /իհարկե, քաղաքական իմաստով/:

Սկզբում որոշել էին քաղաքականապես ստերջ շների ականջներին կանաչ տարբերանշաններ փակցնել, հետո, որպեսզի շատ աչքի չընկնեն, բավարարվել էին չսափրվելով:

…Զարմանալի բաներ էին կատարվում այդ անտառում: Որքան «գամփռն» ու իր շները, շրջանցելով իրենց իսկ ընդունած օրենքները, բնակիչներին կեղեքում էին, վերջիններս այնքան հլու-հնազանդ էին սրանց: Բոլորը տրտնջում էին իրենց վիճակից, շատերը հույսերը կտրած թողնում, հեռանում էին անտառից, բայց հեռվից գովում էին շներին և իրենց աջակցությունը հայտնում:

Այսպես երերում էր անտառը, մինչդեռ քամիներն օրեցօր ավելի էին ուժեղանում…

ԵՐԱԶԸ

Անտառի եզրին մի գյուղ կար՝ աշխարհից կտրված: Անտառի բացատում՝ մի մեծ բլուր: Վաղուց, շատ վաղուց մի հրեշ էր հայտնվել, փորել էր բլուրը և իր համար կացարան պատրաստել: Ասում են, որ բացատն էլ հրեշի ձեռքի գործն էր, նա էր արմատախիլ արել ծառերը, որ իր կացարանի վրա էլ արև ընկնի:

Մի օր գյուղից անհետացավ ամենագեղեցիկ աղջիկը: Երբ երրորդ օրը նա չվերադարձավ, բոլորը մտածեցին, որ հրեշն է գողացել աղջկան, որոշեցին պատժել:

Յոթերորդ օրը աղջկա հագուստները գտան գետի ափին, հասկացան, որ խեղդվել է, բայց միևնույնն է, չհրաժարվեցին հրեշին պատժելու մտքից:

Նույն գիշերը, գյուղի բոլոր տղամարդիկ մոտակա քարափից մի հսկայական քար կտրեցին ու բերեցին դեպի բլուր: Մինչև լուսաբաց քարն արդեն հրեշի դռան դիմաց էր և փակել էր այն:

Հրեշը, որն արդեն ծերացել էր և առաջվա ուժը չուներ, չկարողացավ գլորել քարը և ազատել ելքը: Նա աշխատեց ամբողջ օրը, փորեց-փորեց ու նոր ելք բացեց իր կացարանին:

Գյուղացիները, տեսնելով, որ հրեշը նոր դուռ ունի, հաջորդ գիշեր մեկ ուրիշ քար կտրեցին, բերեցին նոր ելքը փակելու համար:

…Այսպես ժամանակն անցնում էր, ու բլուրը շրջապատվում էր հսկայական նորանոր քարերով:

Ի վերջո, երբ հրեշը վերջին դուռը բացեց, էլ չհամարձակվեց մնալ ներսում: Նա դուրս եկավ, իսկ գյուղացիները բերեցին վերջին քարը և ամբողջովին փակեցին բլուրը:

Հրեշը շատ էր ուզում գնալ իր տուն, բայց, ինչպես ասացի, ծերացել էր, էլ նախկին ուժը չուներ, որ գլորեր քարերից թեկուզ մեկը: Չնայած եթե անգամ գլորեր, մարդիկ նորից այն կբերեին, ու ինքը կմնար ներսում…

Հրեշն սկսեց նոր կացարան որոնել իր համար: Բայց չէր կարողանում գտնել իր ուզածը: Միշտ մի բան այն չէր լինում:

Մի գիշեր, երբ հրեշը քնած էր, երազ տեսավ ու գնաց այդ երազի հետևից: Երազում նրան թվաց, թե ինքն անէացել է, ու մասերի բաժանվելով գնաց ապրելու մարդկանց հոգիներում:

Ասում են, որ մինչև հիմա էլ նա ապրում է մարդկանց մեջ, երբեմն քնած է լինում, բայց ավելի հաճախ արթնանում է:

Անդրանիկ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔ. ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԱՅԼԱԽՈՀՆԵՐԸ

Արվեստաբան
Գայանե ՊԱՊԻԿՅԱՆ

Այն, որ ասում են՝ Լենինական-Գյումրին հակասությունների քաղաք է, միանշանակ է: Գյումրու բազմաթիվ ֆենոմեններից մեկն այն է, որ ավանդապահության ու պահպանողականության դրսևորումներով հանդերձ՝ այստեղ ապրում են նաև վառ դրսևորված այլախոհներ:

Խորհրդային շրջանի 1960-70-ականներին քաղաքում ձևավորվեց երիտասարդների մի սերունդ. նրանք կտրականապես ընդդիմանում էին վարչակարգի գաղափարներին. ապրում էին Լենինականում և չէին ենթարկվում հրամցված մշակույթին, որը տիրում էր տվյալ շրջանում: Նրանք քաղաքում ձևավորեցին այլախոհ մշակութային՝ երաժշտական մտածելակերպ: Խոսքս այն երիտասարդների մասին է, որ զարգացրին ռոք երաժշտությունը և կերտեցին ռոքի պատմությունը Լենինականում: Նրանք էին, որ ստեղծեցին «Ծիծեռնակ» «Շիրակ», «Անգին քարեր», «Արագած», հետագայում «Բամբիռ» և այլ ռոք խմբեր:

70-ականներին Լենինականում, ինչպես և խորհրդային մյուս քաղաքներում կարևորվում էին միայն վարչակարգին համապատասխան գաղափարները: Գործում էր ամենակարող գրաքննությունը: Այլախոսությունը արվեստի ու մշակույթի ոլորտում համարժեք էր այլանդակության: Դե իհարկե, Արևմուտքի ու արևմտյան բարքերի մասին խոսք անգամ չէր կարող լինել: Արգելված գրականություն, անթույլատրելի երաժշտություն (ռոք, ջազ, բլյուզ), սոցռեալիստական կերպարվեստ, «բարեխիղճ» ֆիլմարտադրություն: Քաղաքում լսվում էր կա՛մ ռուսական էստրադա, պարտադիր հնչում էր Սոցիալիստական պետության հիմնը, կա՛մ էլ զանգվածային մշակույթին՝ ռաբիսին բնորոշ երաժշտություն: Այնինչ Արևմուտքում՝ Բրիտանիայում կամ այլ երկրներում, արդեն իրենց փառքն էին վայելում այնպիսի խմբեր կամ երաժիշտներ, ինչպիսիք են The Beatles, Black Sabbath, Led Zeppelin, Pink Ployd և այլք: Ձինսից տաբատ կամ շոր հագնելը համարվում էր կապույտ երազանք, վերը նշված արտասահմանյան խմբերի ու երաժիշտների ձայնասկավառակները գրեթե անհնար էր հայթայթել ու գտնել, ժամանակակից գրականությունը հասանելի էր միայն եզակի երջանիկներին:

Այս ամենի համապատկերում է, որ քաղաքում երիտասարդների մի քանի խմբեր սկսեցին դրսևորել այլախոհի վարքագիծ: Նրանք սկսեցին պայքարել, ընդվզել, չհարմարվել: Տրամաբանական է, որ նրանք արական սեռի ներկայացուցիչներ էին, սակայն տղաների խմբում էր նաև մի աղջիկ՝ Լյուդմիլան, կամ ինչպես հիմա նրան ճանաչում են՝ Լյուդա Բիլբիլիդին, որը դարձավ առաջին ու միակ կին դիջեյը քաղաքում: Նրանց կյանքում այլախոհությունը ինքնաբուխ արտահայտվել է դպրոցական տարիներից՝ 1960-70 ականներին:

«Տղաները կիթառ էին նվագում, բոլորը փորձում էին աչքի ընկնել: «Անգին քարեր» խմբի տղերքը մեր դասարանից էին: Դիսկեր էին բերում Երևանից, լսում էինք: Դիսկ ունենալը էն ժամանակ մեծ խնդիր էր: Վովան էր բերում դիսկեր: Շատ թանկ էին վաճառում: Կոլեկցիա էինք հավաքում. այստեղ քեզ ընդունում էին քո ունեցած դիսկերով: Պետք է մեկին դուր գալու, շրջապատ մտնելու համար գոնե 100 դիսկ ունենայիր: Բուֆետի փողով էինք գնում նման բաները: Առաջին անգամ Pink Ployd այդպես լսեցինք: Հետո Սուրիկը Մարտիրոսյան նվագում էր, կրկնօրինակում: Այստեղից էլ սկսվեց հակասությունը: Մենք և նրանք.... Անջրպետ կար սովետականի և մեր միջև: Մենք այլ էինք...Այդպիսին էր իմ դասարանը, ռոքի դասարան էր, հետո կամաց-կամաց սկսեցին համերգներ տալ: Տղաները Rolling Stones էին նվագում: Մենք ռոքն-ռոլի էպոխայում մեծացանք: Ոչ ոք չգիտեր՝ դա ինչ է»,- հիշում է Լյուդա Բիլբիլիդին:

Երիտասարդների պահվածքը միայն պատանեկան քմահաճույք չէր, այլ ապրելակերպ, սեր, մտածելակերպ: Նրանք սկսեցին վարակել իրենց ճաշակով ու լսածով: Համերգները ինքնաբուխ էին կազմակերպվում: Նվագում էին հիմնականում Լենինականի Սևյանի ակումբում, Գուլպա-նասկեղենի գործարանում, Տեքստիլում: Համերգներ էին կազմակերպվում նաև կենտրոնական զբոսայգում:

«Այգում մենք շատ փառատոներ կենեինք: Առաջին անգամ եկավ «Առաքյալներ» խումբը Լենագան. մե երգից հետո փակեցին, տարան ոստիկանություն: Համերգ գալու համար կտանեին, թաքնվում էինք, որ չտանեին: Էդ մե երգը արժեր, որ տեսնեինք, լսեինք: Եվ մենք մտածեցինք, որ պիտի պայքարենք, այլ տարբերակ չկար: Մանկավարժական ինստիտուտն էլ շանսեր տվեց: Վոլոդյան Քոչարյան «Սեր, ջազ, սատանա» բեմադրեց: «Անգին քարերն» էլ բեմում էին, ինչ կկատարվեր դահլիճում, դա հեղափոխություն էր..»:

Գնալով ամեն ինչ լրջանում էր, ուսանողական տարիներին երիտասարդները չէին զիջում իրենց դիրքերը: Լյուդան պատմում է, թե ինչպես ինստիտուտում արդեն շատ էին այլ մտածելակերպով մարդիկ: «Երկար մազերը կտրում էին, Քոչարյան Ռոբերտի մազերն էին միշտ կտրում: Մեզ նաև ընդունում էին գիտելիքով, կարդացած գրքերով, աշխարհայացքով ու երաժշտությամբ: Դոկումենտալ ֆիլմեր էինք դիտում, Փելեշյանի ֆիլմերը: Սյուրռեալիզմի հետևորդներ ունեինք: Արվեստի աշխատողների տանը հանդիպեցինք Փառաջանովին, երբ նկարահանում էին «Կտոր մը երկինքը» Սոֆիկո Ճիաուրելիի հետ: 1974-75 թվականներն էր: Փառատոները սկսվեցին ինստիտուտում: Դրանք փոխեցին մեր քաղաքը և այդպես սկսվեց կոմսոմոլների կռիվը մեզ հետ: Չէին թողնում բեմ, անպայման պետք է երգես սովետական երգ»:

Քաղաքում գրեթե նույն ժամանակաշրջանում գործում էին «Ծիծեռնակը», «Անգին քարերը», 60-ականներ, հետագայում՝ «Արագածը», 70-ական թվականներ, իսկ ավելի ուշ՝ 78-ից՝ «Բամբիռը»: Կային նաև մի շարք այլ խմբեր՝ «Շիրակ», «Կիլիկիա», The Bells, «Ուրարտու» և ուրիշներ:

«Ծիծեռնակ» խումբը հիմնականում ջազմեններ էին, նրանք արդեն ունեին մասնագիտական կրթություն: Կիթառ ունենալն էլ էր թանկ հաճույք: «Ծիծեռնակը» նվագում էր առանց տեխնիկաների, միկրոֆոնի: Երբեմն կոնսերվատորիայի կրթություն էլ չունեին»: Քաղաքում նրանք արդեն յուրացրել էին նշված տարածքները որպես համերգասրահներ: Սակայն հավաքատեղին ու մտքերի հաղորդակցման կիզակետը Կիրովի՝ ներկայիս Ռիժկով փողոցի երիտասարդական սրճարանն էր: Նրանց ոչինչ չէր կարող կանգնեցնել, ոչ մի արգելք: Լյուդայի խոսքերով, ԱԱԾ-ն հետևում էր, խոշտանգում, տանում հարցուփորձ անելու: «Մենք նաև ունեինք մեր կարգախոսը. ասա՝ ինչ երաժշտություն ես սիրում, ասեմ՝ ով ես դու...»: Հետո խմբերն այնքան շատացան, որ էլ հնարավոր չէր նրանց գործունեությունը կասեցնել:

The Bells

Բամբիռ

Շիրակ



ԳՈՀԱՐ ԳԱԼՍՏՅԱՆ «ԳՈՒՆԴՈՒՉԻԿՆ ՈՒ ՀԱՅԵԼԻՆ»՝ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ՆՎԵՐ

Օրերս «Վան Արյան» հրատարակչությամբ լույս է տեսել բանաստեղծ, արձակագիր Գոհար Գալստյանի «Գունդուչիկն ու հայելին» մանկական բանաստեղծությունների ժողովածուն: Գիրքը տասնվեց բանաստեղծությունների միջոցով, որպես ամբողջական մի պատմություն, տարբեր իրավիճակներում ներկայացնում է փոքրիկ հերոս Գունդուչիկին՝ առաջին քայլերից մինչև դպրոց գնալու նախաշեմը: Հետաքրքիր և ուրախ բացահայտումներով, արկածներով ու բարությամբ, փոքրիկ տղան իր տարեկից ընթերցողին համակում է ընկերության, բնության, կենդանիների հանդեպ սիրով, հետաքրքրություն է առաջացնում գիտելիքի և ընթերցանության հանդեպ: Գրքի գունեղ էջերից՝ հեղինակային նկարազարդումներով, Գոհար Գալստյանի մանուկ հերոսը բարության հատիկներ է շաղ տալիս և բոլորին գրկաբաց հրավեր է անում մի աշխարհ, ուր մանկական անմիջականությամբ բոլոր մանուկներն իրենց ճանաչում են այնպես, ինչպես Գունդուչիկն ինքն իրեն բացահայտեց մի օր հայելում:

Նշենք, որ գիրքն արդեն հասցրել է մանուկ ընթերցողների կողմից սիրվել, և Երևանի Լևոն Միրիջանյանի անվան թիվ 155 դպրոցի ուսուցչուհի Թամարա Միրզոյանի դասարանում հեղինակին հյուրընկալելուց հետո, արդեն հունիսի 1-ին, Մանուկների պաշտպանության օրը, ներկայացվել է Ավետիք Իսահակյանի անվան գրադարանում, որտեղ միրիջանյանցիների հետ մի նաև գրադարանի դպրոցահասակ ընթերցողներն ու հեղինակի փոքրիկ զարմիկները, թոռնիկները բեմից ներկայացրին՝ ինչպես գրքի բանաստեղծությունները, այնպես էլ՝ դեռևս անտիպ մանկական բանաստեղծություններ և Գոհար Գալստյանի հեղինակած երգերից:

ԳՈՒՆԴՈՒՉԻԿԸ ԽԱՂԸՆԿԵՐ

Գունդուչիկը երևի
Նոր էր տեսնում հայելին.
Եկավ, կանգնեց դեմուդեմ,
Ու չգիտեր ի՞նչ աներ…

Ձեռքի գնդակը փափուկ
Թափով նետեց հայելուն,
Հայելին էլ, դե՝ գիտեք,
Ողջը կրկնեց մեկ առ մեկ:

Գունդուչիկը, այս անգամ,
Գնդակն առավ ու ժպտաց.
Հիմա ուներ խաղընկեր՝
Ժպտերես ու գանգրահեր:

ՀՆԱՐԱՄԻՏ ՀԱՅԵԼԻ

Ոսկեգանգուր մազերով,
Հեծանիվով մանկական,
Ո՞վ է տեսել մի զինվոր՝
Ժպտերես ու մարտական:

Գունդուչիկն է մեր արի,
Շոր է հագել զինվորի՝
Պաշտպանում է նորելուկ
Ծիծեռնակի ձագերին:

Ու երբ կատուն խորամանկ
Մոտ է գալիս տանիքին,
Վեր է թեքում նա իսկույն
Հեծանիվի հայելին:

Քար չի՛ գցում նա կատվին,
Այլ միայն ցոլքն արևի,
Որ, երեսը շրջելով,
Կատուն փախչի կտուրից:

ԳՈՒՆԴՈՒՉԻԿԸ ՄԱՐԶԻՉ

Լացը՝ լցված աչքերում,
Գլուխը կախ՝ թռչնի պես,
Սաթեն նստել էր բակում՝
Մենակ, տխո՜ւր էր այնպես:

Գունդուչիկը երբ տեսավ
Նրան այդպես լացելիս,
Մոտ վազեց ու զարմացած
Հարցրեց՝ ինչո՞ւ ես լալիս:

Ասաց՝ հրել է Սեթոն,
Ձեռքից քաշել է կոպիտ,
Խաղալիքն իր սիրելի՝
Խլել-տարել է մոտից:

- Վա՜յ, Սաթե՛ ջան, բայց Սեթոն
Քո եղբայրն է սիրելի,
Քեզնից փոքր է՝ խաղա թող,
Դու էլ դարձիր ֆուտբոլիստ:

Ձեռքը տվեց Սաթեի,
Ոտքի գնդակը կաշվե,
Ասաց.- Կանգնեմ դարպասին,
Դու խփիր, ես՝ կհաշվեմ…

Սաթեն նախ լացը կտրեց,
Ծիծաղեց ու վեր կացավ,
- Ապրես,- ասաց,- Գունդուչի՛կ,
Բայց ես ֆուտբոլ ո՜նց խաղամ:

ԳԵՏԱՓԻՆ

Ամռան տապին, գետափին,
Գունդուչիկը լողացած՝
Քար էր նետում պարապից,
Երբ ճիչերում խլացած
Ձայնը լսեց ընկերոջ.
- Օգնե՜ք,- կանչում էր Սուրոն:

Ափին աշխույժ էր տիրում,
Անգամ մեծեր կային շատ,
Բայց Գունդուչիկը հերոս
Իսկույն նետվեց ընդառաջ…

Ոտքը խփել էր քարի,
Արյունոտ էր՝ երբ եկան,
Բայց Սուրոյի հետ հետո
Ուրախացան շատ երկար…

Ասում էր՝ ո՞նց լսեցիր
Աղմուկի մեջ ձայնը իմ…
Բայց Գունդուչիկն ուսերով
Միայն թոթվում էր՝ «եսիմ»…

Եվ մայրիկն էր Սուրոյի
Վազքով հասել գետի ափ,
Գիրկն էր առել երկուսին
Ու արտասվում էր անձայն:

- Լաց մի՛ եղեք, չի՛ ցավում,
Արյունն էլ ոնց որ անցավ.-
Սա՛ էր խոսքը հերոսի,
Որ օգնեց ու մոռացա՛վ:

ՄՏՔԻ ՀԱՅԵԼԻՆ

Պատկերազարդ, գունագեղ
Իր գրքույկի էջերին,
Մատն էր շարժում ձախից աջ
Գունդուչիկը տողերին:

Կարդում էր վարժ, անսայթաք,
Չէր շփոթում ո՛չ մի տեղ,
Կարդում էր, բայց, ո՜վ զարմանք՝
Դեռ տառերը չգիտեր…

Անգիր արել լսելով՝
Մտքում պահել էր քիչ-քիչ,
Շուտով՝ գնա երբ դպրոց,
Կսովորի ամեն ինչ:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

ԱԶՆԻՒ ԳԱՐԱԼԷՔԵԱՆ
ՄԻՔԱՅԷԼԵԱՆ
Պէյրուայթ-Լիբանան

ԲԱՐԵՒ ՔԵԶ

Երջանկութեան մայրաքաղաք ու
ծանձրոյթի արքայութիւն:
Բարեւ քեզ, հնադարեան վառ
բարեւ…

Փառատօնն ես հազարդարեան
անուրջներով իմ անանուն
եւ անորոշ ապրումներուս
երջանկութեան երկիրն ես դուն.

Անկունքներէ հեռաւոր
Գետեր կուգան վարարուն,
Գետեր կուգան կամրջընկէց,
տարփածայն…

Գետեր սանձող կամուրջ եմ ես,
կամո՞ւրջդ եմ ես.

Գետերուն մէջ երազներ կան.

Յաւերժական անդունդին ափն
անծանօթ
եւ այդ ափին ապարանքներ
հետախուզող ե՛րթն եմ ես,
Ուր կը ծլին, կը ծաղկին իմ
հոգիիս կակաչները կարմրաթուշ
Ուր կը սերտեմ ըլլալ ես ցոլացում-
մը կերպարիդ,
Ունկնդրելով ղօղանջները
զանգակներուդ
Կըլլամ ջրվէժ ձայներուդ հետ ծա-
ւալող…

Ուր կը սորվիմ ըլլալ բոցը աշտա-
նակին ու քրմուհին մեհեանին,
Որ կը ծխէ, կը ծխէ կճատներն ալ
թունաւոր
Բիւր մայթերուն անլուսին…

Եւ դեռ կ՚ըլլամ տարերքներու իշ-
խանուհին, սպասուհին քու տա-
րերքին,
Որ կ՚ապրի լուռ պատրանքները
խուսափուկ
Եւ մարդկային խղճմտանքին
մոխրացած
Որոնումները մաշեցնող,
Ուր կը ծխեմ ես զանոնք
Արիւնելով շրթներն իմ վար
Ու շրթներէս կը ծորին մոխիրն ի
վար
Իմ սերմ արեան կայլակները
ադամանդեայ,
Կ՚ընդելուզուին մոխրադաշտին,
մոխրադաշտին էջերն անգոյն
կ՚ալեկոծին
Ու կը պայթին
Նոր կակաչներ…

Բարեւ քեզ,
Քերթողներու յուսահատ
արցունքներով խռովեալ կաւ,
Կակաչներն իմ ոտքերդ օծող,
քեզ մկրտող միւռոն-գետ են:

ԱՆՈՒՇ ՆԱԳԳԱՇԵԱՆ
Երուսաղէմ-Պաղեստին

ԸՍԷ՞

Դեռ չյանգած լոյսը կեանքիս,
Եթէ յանկարծ տեսնես իրեն,
Ըսէ՞ ինչպէս դեռ կը սպասեմ,
Ըսէ՞ որքա՜ն զինք կը սիրեմ…

Ըսէ՞ հիւանդ տեսար ինծի,
Բայց չկտրած յոյսս կեանքէն,
Ըսէ՞ միայն մէկ անգամ ալ
Կ՞ուզեմ ապրիլ մեր սէրը մեծ…

Ըսէ՞ կեանքս առանց իրեն՝
Երկինք անաստղ, ծաղիկ անցող,
Առանց իրեն սիրոյ տաճար
Անճար հոգիս չունի աղօթք:

Տեսիլք չունի կեանքիս ճամբան,
Լոկ լո՞ւռ քայլեր դէպ՚ գերեզման,
Ըսէ՞ հիւանդ տեսար ինծի
Բայց դեռ վառ է յոյսս վերջին…

Եթէ յանկարծ տեսնես իրեն,
Ըսէ՞, ինչպէս դեռ կը սպասեմ,
Ըսէ՞, որքա՜ն զինք կը սիրեմ,
Եթէ յանկարծ, յանկարծ, յանկարծ
տեսնես իրեն…

ԱՐԱ ԵՈՒՀԱՐԵԱՆ
Ուաշինկթըն-ԱՄՆ

ՇԱՔԱՐԱՄԱՆ

Կ՚ուզեմ կախուիլ պատշգամի
ճաղերէն
թացնալ անձրեւէն
չորնալ հովէն
բայց մարդիկ պիտի այլայլին այս
նոր
զարմացական նշանէն
աւելի լաւ է մտնեմ սենեակս
եւ կախուիմ
շարունակականութենէն

***

ես եւ ես փողոց իջանք միասին
ես անհետացայ մերկ – փողոցի
վերջաւորութեան
իսկ ես - հագուստներով տուն վե-
րադարձայ
տանս ծաղիկները ջրեցի

***

էրը երազ էր - մնաց
մենք չմնացինք - իրական էինք
սիրոյ շաքարները մնացին
շաքարամանին մէջ

***

մարգագետինը կապոյտ է
երկինքը կանաչ
երդիքը անգոյն
ծուխը վարդագոյն
եւ կ՚ուրախանաս
գոյները փոխած ըլլալուդ համար

***

թռչունները երբ ճռուողեն վիթ-
խարի ծառերուն մէջ
չեն երեւիր
կարծես ծառերը կը ճռուողեն
թռչուններուն փոխարէն
քար կը նետեմ ծառին
որ թռչունները թռչին
թռչին որ երեւին
եթէ թռչունները չթռչին
չեն երեւիր

***

ես կորսնցուցի ճամբան
դուն գտար ճամբան
որովհետեւ ուրիշ բան չունէի
կորսնցնելիք
որովհետեւ ուրիշ բան չունէիր
գտնելիք
որովհետեւ ամէն ինչ ճամբորդու-
թիւն է
որովհետեւ ամէն ինչ ճամբորդու-
թիւն է

***

գիտնալու համար զիս
պիտի փորես հողը մինչեւ
արմատներս
եւ պիտի տեսնես թէ
ճիւղերս ու արմատներս գրեթէ
նոյն տեսքը ունին
բայց չունին նոյն ձգտումները
ճիւղերս կը ձգտին դէպի երկինք
արմատներս դէպի խորերը հողին
իսկ այն հորիզոնական գիծը
որ կը բաժնէ հողը երկինքէն
ոչ մէկ ձգտում ունի

***

բոլորն ալ նոյն հարցումը կը
հարցնէին
թէ ինչու կը հալէր սառցակոյտը
մոռցած էին - թէ անոնք
դպչած էին սառցակոյտին

***

եղած բաները այնքան պարզ են
եւ յստակ - որ
չեղած բաները աւելի կարեւոր կը
թուին հիմա
այնքան պարզ են եւ յստակ

արեւի՝ լոյսը-թթուածինը -
անձրեւները - կողովիս
մէջ հաւաքուած մանկոները
բայց
չեղած բաները աւելի կարեւոր
կը թուին հիմա
փոխ յատուցումը

***

հեռացուր փոշին իրերէդ
եւ նստիր բազկաթոռիդ
վայելելու համար փայլքը իրե-
րուդ
Իրիկուայ թէյիդ հետ
մի մտահոգուիր
երբ փոշին նստի իրերուդ վրայ
երբեք չի դառնար մաս մը իրերէդ

***

հանրակառքը կուգայ կ՚երթայ
իսկ ես տակաւին կեցած կանգա-
ռին
կը սպասեմ
կը սպասեմ
կը սպասեմ
կը սպասեմ ես ինծի

ԱՐԱՄ ՔԷԹԷՆՃԵԱՆ
Պաղտատ-Իրաք

Կարօտ ու բերկրանք

Խաւարին մէջ գիշերուայ
Հայեացքս կողմդ յառած,
Ուր բազմած ես վեհութեամբ
Հիմա՝ անյայտ, մթագնած:

Այնտեղ ես Դուն օրնիբուն,
Երկա՛ր դարեր, բիւր տարիք,
Որպէս պահակ մշտարթուն
Յար կը հսկես հայրենիք:

Քեզ տեսնելու բուռն տենչով
Ես կը սպասեմ այգաբաց,
Իսկ ժամերը գիշերուայ
Անանցնող են ու սառած:

Բայց վերջապէս՝ լուսաբաց
Ու ճառագայթք շողշողուն,
Կարծես երկինքն այդ ժամուն
Քեզմով դարձաւ փայլփլուն

Իսկ արփին այս նորածագ
Քեզ համբուրեց կարօտով,
Իսկոյն դարձար երփներանգ,
Հազա՛ր անուն գոյներով:

Ու Քու դէմքը ձիւնածածկ,
Դարձաւ յստակ ու պայծառ.
Ինծի ժպտաց քնքշագին,
Ես մնացի ապշահար…

Սրտի անհո՛ւն հրճուանքով,
Հազար բարեւ Քեզ տուի.
Որդիական խոր սիրով,
Հա՛յր իմ, Մասի՛ս, կանչեցի…

Օրերս Գյումրու գեղագիտության ազգային կենտրոնում գրական և թատերական ստուդիաների սաների մասնակցությամբ տեղի ունեցավ Ե. Չարենցի ծննդյան 125-ամյակին նվիրված «Հարդագողի ճամփորդը» խորագրով բեմականացված գրական կոմպոզիցիա, որի առանցքում բանաստեղծի մի շարք ստեղծագործություններն էին: Բեմադրությունը՝ թատերական ստուդիայի ղեկավար, Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասան Արսեն Սաղաթելյանի: Երաժշտական ձևավորումը՝ Գրիշա Խաչատրյանի: Ըստ Չարենցի՝ «ժամանակակից թատրոնը ձգտում է ազատագրվել պայմանական վարագույրից, դեկորից, քանդել բեմը, լայնացնելայն մինչև հրապարակային սահմանները: Գալիք թատրոնի տեղը հրապարակն է»:

Չարենցի երգը հասցեագրված է գալիքին, արևներին ու հրկեզ հոգիներին: Կյանքին նայել ապագայի դիտակետից. այս է պատանիների շուրթերից հնչող չարենցյան ստեղծագործությունների պատգամը:

Լիանա ՎԱՐԴԱՆՅԱՆ

Վերջերս ՀՀ ԿԳՄՍՆ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի գրադարանավար Ս. Հակոբյանը և Ուսանողական խորհուրդը հյուրընկալվել էին Գյումրու գեղագիտության ազգային կենտրոնի գրական ստուդիայում՝ գրող-ընթերցող անմիջական շփումը երկուստեք կարևորելու համատեքստում:

Օրվա խորհուրդն էր՝ արժևորել ժամանակակից ստեղծագործողների վաստակը գրական-հասարակական կյանքում:

Ուսանողները նախ՝ ներկայացրին Վարդգես Պետրոսյանի գրական-հրապարակախոսական գործունեությունը՝ հայրենասիրական գաղափարներով ու պատգամներով:

Ապա և բանաստեղծուհի Ռոզա Հովհաննիսյանի հետ Կլոր սեղան քննարկումը հնարավորություն ստեղծեց հաղորդակցվելու, անկաշկանդ արտահայտելու մտքերը ստեղծագործական գործընթացի ու գրականության մերօրյա խնդիրների շուրջ:

Գրական հարթակն իր շուրջն էր համախմբել Գյումրու գեղագիտության ազգային կենտրոնի գրական ստուդիայի դպրոցահասակ ստեղծագործողներին, որոնց գրչի առաջին փորձերն արդեն իսկ տեղ են գտել թերթերում ու գրական անթոլոգիաներում:

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի Գեղանկարչություն և քանդակագործություն՝ փորագրող, փայտյա գեղարվեստական իրերի բաժնի ուսանողները գրի խորհրդանիշ համարվող փետուր-արձանիկ էին պատրաստել և նվիրեցին գրական ստուդիային:

Սեդա ՀԱԿՈԲՅԱՆ

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունն իրականացնող՝
Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային
մասնաճյուղ:
Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62
Վկայական N 01Բ 001543

տրված է 21.03.2005թ.
հեռ. (094) 53 44 64
Խմբագրական խորհուրդ
Գլխավոր խմբագիր՝
Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլդորադո Պրինտ» ՍՊԸ
Տպագրված է «Ռուբիկ Ղարիբյան» Ա/Ձ տպագրատանը
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 1 տպագրական մամուլ